

քերուն մէկ քանի ժամը մեզի նուիրել,  
ընդունեցէք մեր և այս պատանեաց  
շնորհակալութիւնները :

Ի՞զա պէյր, որ մեծապատիւ Վալ-  
լիմաքի իշխանին տեղը հոս ( ) սմանեան  
տէրութեան երեսփոխանն է, որով վե-  
հափառ թագաւորին ալ այս վարժա-  
րանիս վրայ ունեցած բարեսէր խնամքը  
կը յայտնէ մեզի, հաճեցաւ հանդիսիս  
գահէրեցութիւնը յանձն առնուլ . իր  
անունը այս գեղեցիկ օրուանս յիշատա-  
կէն անբաժանելի պիտի մնայ : Փարի-  
զու եկեղեցականաց պատկառելի ժողո-  
վէն, որ ամէն անգամ յայտնած է մեզի  
իր իմաստուն բարեկամութեան ապա-  
ցոյցնէրը, շատ մը մեծարոյ անձինք ա-  
ռաջիկայ են հանդիսիս . անոր ալ մեր  
երախտագիտութեան նուէրը կը նորո-  
գենք : Այս ժողովս մէջ գտնուող մեր  
հայրենակից եղբարքը ուրիշ տարինե-  
րու պէս աս տարի ալ պարտք մը կը  
կատարեն որ միշտ սիրելի պիտի ըլլայ  
իրենց սրտին և ազգասիրութեանը :  
Խնուանի վարժապետներ, մեծահամ-  
բաւ գիտուններ, հոչակաւոր արևելա-  
գէտներ եկեր են որ նորէն ցուցընեն  
մեզի թէ ինչ մտադրութեամք կը յար-  
գեն իրենք մեր աշխատանաց նպատա-  
կը : Եյտ ասոնց ամենուն վրայ, Գաղ-  
ղիոյ տէրութիւնը որ օրէ օր աւելի կը  
քաղցրացընէ մեզի իր հիւրընկալու-  
թիւնն ու պաշտպանութիւնը, պէտք է  
ընդունի մեր շնորհակալութեան նուէր-  
քը : Սկայ մէկ երկիր մը ուր որ ազ-  
գութեան անունը այնպէս լաւ հասկը-  
ցուի՝ ինչպէս աս Գաղղիոյ մէջ, որ այն  
չափ անգամ ցըցուցած է իր արիական  
ու խոհական հայրենասիրութիւնը :  
Այսչափ և այսպիսի բարեկամական  
մտադրութիւններ տեսնելէն ետեւ աս  
վարժարանիս վրայ, օրէ օր ասոնց աւե-  
լի կերպով արժանի ըլլալ է մեր վախ-  
ճանը, Պարոններ . և այս վախճանիս  
համնելու ալ մեծ յոյս ունինք ձեր ձեռըն  
տուութեամքը : ( ծափակարութեանք :

Պատասխանի Բոջա Պիթի Վարժականը  
( ) սմանեան Պիետութեան է փարէդ :

Պարոններ,

Ա արժարանիս վերակացուները կ'ու-  
զէին որ Վալիմաքի իշխանը յանձն  
առնուր աս հանդիսիս գահէրէց բազ-  
մելու պատիւը : Խնիկայ հոս չգտնուե-  
լով, հաճեցան ինծմէ ինսդրել որ անոր  
տեղը բռնեմ, որպէս զի ( ) սմանեան  
տէրութիւնը նորէն մէկ յայտնի նշան  
մը ցուցընէ աս պատուական վարժարա-  
նիս վրայ ունեցած համարմանն ու սի-  
րոյն, որովհետեւ հոս իր հպատակները՝  
Խնիթ արեանց անխոնջ աշխատանօքն  
ու Գաղղիոյ հիւրասիրութեամքը ազ-  
նիւ ու իմաստուն դաստիարակութիւն  
մը կ'ընդունին :

Ա իրով ընդունեցայ ես, Պարոններ,  
այս ինծի առաջարկուած պատիւը, վասն  
զի վստահ էի որ ես հոս թարգման պի-  
տի ըլլամիմտէրութեանս որ ամէն տե-  
սակ վեհանձնական ջանքերն ընելու  
հետ է՝ որպէս զի ուսմունքը իր բոլոր  
հպատակացը մէջ տարածուի :

Ա շխարհիս մէջ մէկը չկայ հիմայ որ  
չձանչնայ ու չյարգէ մեր վեհափառ  
Խուզանին մեծ ու վսեմ քաղաքակա-  
նութիւնը, որ կը յայտնէ իր հպատակ-  
ներուն ինչ ազգէ և ինչ կրօնէ ալ ըլ-  
լան : Այս տէրութեան խորհուրդներուն  
մէջ տիրող գլխաւոր բաղձանքը աս է  
որ հայրենասիրութեան ու ազգասի-  
րութեան կապերը հետզհետէ աւելի  
ձիգ կապուին . կը ցաւիմ որ ես աս բաղ-  
ձանքը նոյնչափ ճարտասանութեամք  
բացատրել չեմ կրնար՝ որչափ զգաց-  
մամք որ սրտիս մէջ կ'իմանամ:

Ա մենեին տարակոյս չկայ, Պարոն-  
ներ, որ այս վարժարանիս վերակա-  
ցուացը հայրական ինսամքովը կրթուած  
հայազգի պատանեաց շատը իրենց տէ-  
րութեանը պաշտօններուն մէջ պիտի  
մտնեն . ուստի այն եռանդը, տաղան-  
դը, աշխատանքը որ տէրութեան վե-  
րանորդութեանը համար կը կատա-

ըուին՝ ինչպէս որ պէտք է արդարութեամբ ու բարեսիրութեամբ պիտի ձանցուին ու յարգուին, և ամէն տեսակ արդիւնք իրեն արդարացի վարձատրութիւնը պիտի ընդունի :

**Չեմկրնար մոռնալ, Պարոններ, թէ այսպիսի յառաջադիմութեան ու կատարելութեան գործ մը որ ամենուն ալ սիրելի ու հաճոյական բան մըն է՝ Պաղպիոյ մէջ է որ կը կատարուի, անոր հիւրասիրութեամբն ու գիտութեանց մէջ**

այնչափ առաջ գնացած ըլլալովը : Պաղղիա մեր տէրութեան հաւատարիմ ու հին դաշնակիցներէն մէկն է, և անոր հետ մարդկային ազգին բարիք ընելու կ'աշխատի : ( ) սմանցւոյ մը համար մեծ ուրախութիւն է որ իր տէրութեանը այսչափ օգտակար դպրոցի մը անուանը հետ մէկտեղ կապուած գտնէ Պաղղիոյ անունը, և անով նոր առիթ մը ունենայ իր երախտագիտութիւնը յայտնելու գաղղիական տէրութեան :

